


ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

3 դեկտեմբերի

**Հայաստանում Հնդկաստանի Նորանշանակ
դեսպանին**



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կիշան Դան Դեալին։
Ողջունելով դեսպանին՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու ժողովուրդների բարեկամական պատմական հարաբերություններին՝ ընդգծելով, որ դրա լավագույն վկայությունը Հնդկաստանում առկա հայկական եկեղեցիներն են եւ թեւ թվաքանակով փոքր, սակայն ակտիվ հայ համայնքը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծապես կարեւորեց նաեւ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի գործունեությունը եւ առաքելությունը՝ նշելով, որ այն յուրօրինակ կամուրջ է երկու երկրների միջեւ հարաբերությունների սերտացման գործընթացում։ Նորին Սրբությունը նաեւ գնահատեց բոլոր այն ջանքերը, որ երկու երկրների կողմից գործարկվում են տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման ուղղությամբ։
Դեսպանն իր խոսքում անդրադարձ կատարեց Հնդկաստանի եւ Հայաստանի միջեւ ձեւավորված

պատմական առնչություններին, հայերի պատմական ներկայությանը Հնդկաստանում եւ նրանց թողած ազդեցությանը հատկապես Հնդկաստանի կրթական ոլորտի վրա, որը շարունակվում է մինչ այսօր։ Նա խոսեց նաեւ հայ-հնդկական քաղաքական հարաբերությունների եւ առաջիկա ծրագրերի մասին։
Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը դեսպանից հետաքրքրվեց Հայաստանում հնդկական համայնքի կյանքով, մասնավորապես ՀՀ բուհերում ուսանող հնդիկ երիտասարդներով։ Անդրադարձ կատարվեց դեսպանատան կողմից Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերին, ինչպես նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Կալկաթայի Սուրբ Նազարեթ եկեղեցու վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ Կալկաթայում իրականացվող հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած զինվորականների վերջույթների պրոթեզավորման եւ բուժման ծրագրին։
Վերջում Հայոց Հովվապետը դեսպանին մաղթեց արդյունաշատ առաքելություն Հայաստանում։

4 դեկտեմբերի

Հայաստանում Լիտվայի դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ինգա Ստանիստե-Տոլչկիենին։
Իր բարենադրանքները փոխանցելով դեսպանին՝ առաքելության ստանձնման առիթով, Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Լիտվայի եւ Հայաստանի միջեւ ձեւավորված դիվանագիտական հարաբերություններին եւ սերտ գործակցությանը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ խոսեց Լիտվայի հայ համայնքի եւ նրա հոգեւոր խնամքի մասին։
Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը վերհիշեց արցախյան գոյապայքարի սկզբնավորման օրերին հայ ժողովրդին լիտվացիների կողմից ցուցաբերված զորակցությունը։

Դեսպան Ինգա Ստանիստե-Տոլչկիենին եւս անդրադարձ կատարեց երկկողմ հարաբերություններին եւ դրանց ընդլայնման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ կարեւորելով նաեւ փորձի փոխանակումը երկու երկրների միջեւ։ Լիտվայի հայ համայնքի առնչությանը տիկ. Ստանիստե-Տոլչկիենին հաստատեց, որ հայերը հարգված քաղաքացիներ են, որ իրենց օգուտակար մերդրումն են բերում տարբեր ոլորտներում։
Հանդիպմանը խոսվեց նաեւ քույր եկեղեցիների հետ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու փոխհարաբերությունների մասին։
Վերջում դեսպանն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ՝ ծանոթանալով Մայր Աթոռում պահպանվող հոգեւոր-մշակութային արժեքներին։

6 դեկտեմբերի

Գլատեմալայի Կոնգրեսի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գլատեմալայի Հանրապետության Կոնգրեսի առաջին փոխնախագահ Ֆելիպե Ալեխոս Լորենզանայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Լեւոն Նազարյանի։
Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց Հայաստանի եւ Գլատեմալայի Հանրապետությունների միջեւ գործակցային կապերի հաստատմանն ուղղված առաջին քայլերի կապակցությամբ՝ այդ համատեքստում կարեւորելով Գլատեմալայի Հանրապետության Կոնգրեսի եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ բարեկամության եւ խորհրդարանական համագործակցության մասին համաձայնագրի ստորագրումը, որը մոր հորիզոններ պիտի բացի կապերի հաստատման եւ փոխհարաբերությունների ընդլայնման համար։
Խոսելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության, հայ ժողովրդի պատմության մեջ քրիստոնեության դերի մասին՝ Ամենայն Հայոց Կաթո-

ման կարեւորությամբ՝ մարդկային կյանքում մեծ ոճրագործությունների կանխարգելմանն ի նպաստ, ինչպես նաեւ լուսաբանություններ տվեց Լեւոնային Ղարաբաղի հակամարտության եւ դրա խաղաղ հանգուցալուծման անհրաժեշտության վերաբերյալ։ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ Գլատեմալայի իշխանությունները կարտահայտեն իրենց դիրքորոշումը հայ ժողովրդի համար կարեւոր այս խնդիրների շուրջ։
Պրն Ֆելիպե Ալեխոս Լորենզանան, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշեց, որ այցելությունը Հայաստան կարեւոր քայլ է երկու երկրների միջեւ հարաբերությունների հետագա զարգացման եւ փոխգործակցության համար։ Փոխնախագահը նաեւ ներկայացրեց Գլատեմալայի Հանրապետությունում վերջին տարիներին տեղի ունեցած զարգացումները՝ կարեւորելով փորձի փոխանակումը եւ Հայաստանի հետ հարաբերությունների հետագա ամրապնդումը։ Արդարադաժնի պատմության ողբերգական էջերին՝ նա նշեց, որ չպետք է մոռանալ



դիկոսն անդրադարձավ այն փորձություններին եւ մարտահրավերներին, որոնց դիմագրավել է հայ ժողովուրդը՝ պահպանելով իր ազգային ինքնությունը եւ ուրույն դիմագիծը։ Նորին Սրբությունը մասնավորապես պատվիրակության ուշադրությունը հրավիրեց Հայոց ցեղասպանության դատապարտ-

անցյալը, քանի որ այն կրկնվելու հատկություն ունի, ապա կարեւորեց տարբեր հարցերի շուրջ այցի ընթացքում ստացված լուսաբանությունները։
Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը բարի արդյունավորում մաղթեց երկու երկրների հարաբերությունների աշխուժացմանն ուղղված քայլերին։

10 դեկտեմբերի

**Հայաստանում Ռումինիայի Նորանշանակ
դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Կորնել Իոնեսկուին։
Իր օրհնությունն ու բարենադրանքները բերելով նորանշանակ դեսպանին՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների ու ժողովուրդների ջերմ եւ սերտ հարաբերություններին, ինչը վկայված է նաեւ Ռումինիայում շուրջ հազար տարվա պատմության ունեցող հայկական ժառանգության առկայությամբ։
Հայ-ռումինական հարաբերությունների սերտացման, խորացման եւ համագործակցության ընդլայնման գործում Նորին Սրբությունը կարեւորեց Ռումինիայի հայ համայնքի դերակատարությունը։ Վեհափառ Հայրապետը նաեւ խոսեց Ռումինիայի եւ ռումին ժողովրդի հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առանձնահատուկ ջերմության մասին, ինչը պայմանավորված էր երջանակահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձով եւ գործունեությամբ։
Շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին օրհնության եւ բարենադրանքների համար՝ պրն Կորնել Իոնեսկուն հավաստիացրեց, որ իբրեւ դեսպան՝ իր ջանքերը կներդնի հայ-ռումինական հարաբերությունների առավել ամրապնդման համար։ Դեսպանն անդրադարձավ նաեւ Ռումինիայի հայ համայնքի եւ Ռումինիայի հայոց թեմի կյան-



քին՝ ընդգծելով տարբեր ժողովուրդների ազգային ինքնության եւ մշակութային ժառանգության պահպանմանն ի նպաստ Ռումինիայի իշխանությունների կողմից դրսևորվող հոգատարությունը։
Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր եղբայրական ջերմ ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Ռումին Ուղղափառ եկեղեցու Դանիել Պատրիարքին, իսկ նորանշանակ դեսպանին մաղթեց, որ Աստված ուղեկից լինի վերջինիս՝ իր առաքելության արդյունավորման գործում։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց հայոց առաջին լուսավորիչների տոնը



Եւ այդ առաքելականութիւնը դրսեւորվում է երեք հիմնական հատկանիշների միջոցով: Այսօրվա տոնի օրհնության շարականը մատնացույց է անում առաքելական լինելու այդ երեք հատկանիշները: Դիմելով առաքյալներին՝ շարականագիր հեղինակն ասում է. «Սպասաւորք եւ բարեկամք եւ վկայք Աստուածորդւոյն բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց»:

Առաքելական քրիստոնյա լինել առաջին հերթին նշանակում է լինել սպասավոր Աստծո կենդանի խոսքի: «Առաքյալ» բառն ինքին նշանակում է առաքված, ուղարկված՝ քարոզելու Ավետարանը: Ոմանք կարծում են, որ Աստծո խոսքի տարածումը միայն հոգեւորականների



Եւ այդ առաքելականութիւնը դրսեւորվում է երեք հիմնական հատկանիշների միջոցով: Այսօրվա տոնի օրհնության շարականը մատնացույց է անում առաքելական լինելու այդ երեք հատկանիշները: Դիմելով առաքյալներին՝ շարականագիր հեղինակն ասում է. «Սպասաւորք եւ բարեկամք եւ վկայք Աստուածորդւոյն բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց»:

Տոնի առիթով Էջմիածնի Ս. Զովհաննէս Սկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագին էր Գետրոյան հոգեւոր ծանարանի տեսուչ Մետրոպոլիտ Պարսամյանը: Պատարագին ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ եւ բազմաթիվ հայորդի ուխտավորներ:

Ս. Պատարագի ընթացքում եկեղեցական հանդիսավոր թափորը, առաջնորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուռ-մկրտարան բերեց աստվածամուխ Ս. Գեղարդը: Նորին Սրբությունն օրհնեց ներկա ժողովրդին, ապա ուխտավորաբար ժամանած հավատացյալներին հնարավորություն ընձեռվեց երկրպագելու եւ համբուրելու համաքրիստոնեական սրբությունը:

Սրբազան արարողության ընթացքում հայր սուրբն անդրադարձ կատարեց տոնի խորհրդին՝ ի մասնավորի նշելով. «Սուրբ Թադեոս եւ Բարդուղիմէոս առաքյալների վկայությունը սոսկ պատմական նշանակություն չունի մեզ համար, որը փաստում է Հայոց եկեղեցու առաքելական ծագումը: Այո, մեր եկեղեցին առաքելական է, բանգի հիմնադրվել է առաքյալների կողմից եւ դավանում է առաքյալների ուղղափառ վարդապետությունը: Սակայն մեր եկեղեցին առաքելական է նաեւ իր էությանը,

գործն է, սակայն մեր Տիրոջ առակները՝ երկրի աղը լինելու եւ աշտանակի վրա դրված ճրագի (Մատթ. Ե 15) մասին, վերաբերում են բոլորիս: Սկրտված յուրաքանչյուր քրիստոնյա Սուրբ Զոգուց կոչված է վկայություն բերելու, սփռելու Ավետարանի Բարի Լուրը իր սիրելիներին եւ ընտանիքին, հարեւաններին եւ գործընկերներին՝ խոսքով եւ գործով»:



Հայր Մետրոպոլիտ կարեւորեց նաեւ, որ Աստծո մասին խոսելուց առաջ պետք է նախ ճանաչել Նրան, խոսել Աստծո հետ եւ ունկնդիր լինել Նրա աստվածային ձայնին:

Խոսելով քրիստոնեական վկայության մասին՝ հայր Մետրոպոլիտ հաստատեց, որ առաքելական լինել նշանակում է լինել վկա, նշանակում է լինել նաեւ նահատակ, խոստովանող:

«Վկա են անվանվում բոլոր նրանք, ովքեր վկայում են իրենց հավատքը, խոստովանում եւ դավանում Հիսուս Քրիստոսին որպէս Աստծո Որդի եւ Տէր՝ իրենց կյանքի գնով, իրենց մահվան գնով: Մեր եկեղեցին դարձրել շարունակ այս երեք հատկանիշներն է դարձրել իր առաքելության առանցքը եւ դրա համար էլ իրավամբ կոչվում է Առաքելական: Մեր հայրերը Աստծո կենդանի խոսքի անխոնջ սպասավորներն էին: Թերթատեք մեր հարուստ մատենագրական ժառանգությունը, եւ կտեսնեք, թե ինչպէս են մեր եկեղեցու սուրբ հայրերը ջանադրաբար սպասավորել եւ մատուցել Աստծո կենարար խոսքը մեր ժողովրդին: Ընթերցեք ս. Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության շարականները, ս. Գրիգոր Նարեկացու աղոթագիրքը, ս. Ներսէս Շնորհալուի եւ Զովհաննէս Գառնեցու աղոթքները եւ կհասկանաք, թե ինչպիսի՞ ջերմ աղոթական մտերմություն են ունեցել մեր սուրբ հայրերն Աստծո հետ՝ իրենց սրտի խորքերից բխած խոսքն ուղղելով Ամենասուրբ Երրորդությանը», - փաստեց հայր սուրբը:

Պատարագից ընթացքում, որ մեզանից յուրաքանչյուրը կոչված է լինելու սպասավորն Աստծո խոսքի, Նրա հետ աղոթական մտերմության եւ Նրա Սուրբ Անվան վկայության եւ խոստովանության:

Վերջում հայր Մետրոպոլիտ հորդորեց հավատացյալներին միասին աղոթել եւ հայցել սուրբ առաքյալների բարեխոսությունը, որպէսզի նրանցից ստացած մեր սուրբ հավատքը եւ առաքելական կոչումը շարունակեն արդյունավորվել հայ ժողովրդի մեջ՝ ի փառս Ամենասուրբ Երրորդության եւ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ եկեղեցու: Ս. Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով եւ հրաշագործ ս. Գեղարդով օրհնեց ներկա ժողովրդին:

Աստվածամուխ ս. Գեղարդը Մայր Աթոռի մարտուռ-մկրտարանում մնաց մինչեւ երեկոյան ժամերգության ավարտը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրահավորագիրը Կ. Պոլսի Հայոց նորընտիր Պատրիարքին

Դեկտեմբերի 12-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից իր օրհնությունն ու շնորհավորանքները հղեց Սահակ եպս Մաշալյանին՝ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք ընտրվելու առիթով:

Կ. Պոլսի հայոց 85-րդ Պատրիարքի ընտրության Ազգային պատգամավորական ժողովի ատենապետ Խաչիկ Ճանելը եւ ատենադպիր Արեւտ Քարապուլուքը պաշտոնական գրությամբ Վեհափառ Հայրապետին տեղեկացրել են ժողովի արդյունքների վերաբերյալ եւ հայցել Նորին Սրբության աղոթքն ու օրհնությունը հայոց նորընտիր Պատրիարքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագրում ասված է.

«Ամենապատիվ Պատրիարք Սրբազան, Գոհունակությամբ տեղեկացանք, որ Կ. Պոլսում գումարված համագումար ժողովը ձայների մեծամասնությամբ ընտրել է Ձեզ՝ որպէս Կ. Պոլսի հայոց 85-րդ Պատրիարք:

Հոգու բերկրանքով Սուրբ Էջմիածնից ողջունում եւ շնորհավորում ենք Ձեր ընտրությունը՝ բերելով եղբայրական Մեր սերը եւ գորակցությունը Ձերո Ամենապատվությանը: Ուրախ ենք, որ երկարատեւ ընդմիջումից հետո Կ. Պոլսի հայոց Պատրիարքական Աթոռն օժտվեց նոր գահակալով:

Ծնվելով ու հասակ առնելով պոլսահայ ավանդաշատ իմաստներում՝ Դուք մանկուց կրթվել ու դաստիարակվել եք աստվածսիրությամբ, եկեղե-

ցասիրությամբ ու ազգասիրությամբ, որոնք բնորոշ հատկանիշներն են պոլսեցի հավատավոր Մեր ժողովրդի:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, երբ տարիներ առաջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսաճեմ խորանի առջեւ ծնրադրումով, ստանձնեցիք եպիսկոպոսական բարձր իշխանությունը եւ նոր հանգամանքի մեջ շարունակեցիք տերունապատվեր Ձեր ծառայությունը՝ որպէս Գետրոյան հոգեւոր ճեմարանի տեսուչ: Արդարեւ, Մայրավանքում անցկացրած Ձեր տարիները նշանավորվեցին արդյունաշատ գործունեությամբ: Շնորհիվ Ձեր հոգեւոր, աստվածաբանական ու դաստիարակչական գիտելիքների՝ ունեցանք ճեմարանականների նոր սերունդ, որոնք ծառայաւեր ոգով այսօր սպասավորում են Մեր Սուրբ եկեղեցու անդաստանում:

Աղոթում ենք, որ ամենակալ Տերը ուժ ու կարողություն պարգեւի Ձեզ՝ ամենայն իմաստությամբ եւ բարձր պատասխանատվությամբ ստանձնելու Մեր Սուրբ եկեղեցու Նվիրապետական Աթոռի՝ Կ. Պոլսի հայոց Պատրիարքության հոգեւոր առաքելությունը՝ ի պայծառություն Մեր Սուրբ եկեղեցու եւ ի մխիթարություն Կ. Պոլսի հավատացյալ Մեր ժողովրդի զավակների: Թող Տերը օգնական եւ գորավիզ լինի Ձեզ՝ շնորհելով քաջառողջ արեւշատություն եւ հաջողություններ հոգեւոր Ձեր ծառայության մեջ:

Սիրով սպասում ենք՝ որպէս Կ. Պոլսի նորընտիր Պատրիարք Ձերո Ամենապատվության անդրանիկ այցին ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց բազմազավակ բախանաների ընտանիքների հետ



Եւ այդ առաքելականութիւնը դրսեւորվում է երեք հիմնական հատկանիշների միջոցով: Այսօրվա տոնի օրհնության շարականը մատնացույց է անում առաքելական լինելու այդ երեք հատկանիշները: Դիմելով առաքյալներին՝ շարականագիր հեղինակն ասում է. «Սպասաւորք եւ բարեկամք եւ վկայք Աստուածորդւոյն բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց»:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետն իր ուրախությունը հայտնեց հանդիպման առիթով՝

առավել կարեւորելով այն փաստը, որ հանդիպումը չորս եւ ավելի զավակ ունեցող բախանաների ընտանիքների հետ տեղի է ունենում «Ընտանիքի տարվա» շրջանակներում: Նորին Սրբությունը հաստատեց, որ տարվա ընթացքում Մայր Աթոռի եւ թեմերի կողմից նախաձեռնված բայելեր եւ միջոցառումները պետք է շարունակական բնույթ կրեն՝ առավել չափով ժողովրդի ուշադրությունը սեւեռելու ընտանեկան արժեքների վրա: Ընդգծելով, որ բազմազավակությունը երկնային օրհնություն է՝ Նորին Սրբությունը նշեց, որ ընտանիքը փոքր եկեղեցի է, որ ընտանիքի գոյության առաջնային հիմքը տղամարդու եւ կնոջ սերն է՝ հաստատված Տիրոջ ներկայությամբ եւ օրհնությամբ, շաղախված փոխադարձ հարգանքով ու ներողամտությամբ, զիջելու պատրաստականությամբ եւ խոնարհությամբ:

Շարունակությունը՝ էջ 4

Հանդիսություն Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակի առիթով



Բեկտեմբերի 1-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Երանաշնորհի Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին:

Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, թեմակալ առաջնորդներ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը, պետական այլեր, ՀՀ-ում դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ եւ այլ հրավիրյալներ:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեց «Էջ Միածինն ի Հօրե» շարականը, ապա ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ արք. Կարապետյանը:

Երեկոյթին ձեռամբ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարների, ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի ղեկավար, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան Եպս ժամկոչյանի, «ՀայՓոստ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հայկ Ավագյանի ու ՀՀ ֆիլատելիստների միության նախագահ Հովհիկ Մուսայելյանի կատարվեց «Մեծանուն հայեր. Կոմիտասի ծննդյան 150-ամյակը» թեմային նվիրված մեկ նամականիշով գեղաթերթիկի մատուցումը:

Այնուհետեւ հանդիսության առիթով ներկայացրին իր հայրապետական պատգամն ու օրհնությունը փոխանցեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Միտելի հավատավոր զավակներ Մեր,

Գոհունակ սրտով ողջունում ենք Կոմիտաս վարդապետի 150-ամյակի առիթով կազմակերպված այս համերգի մասնակիցներին: Մեր երաժշտության մեծ երախտավորի հոբելյանն այս տարվա մեջ նշվեց տարբեր միջոցառումներով, եւ այսօր մեկ անգամ եւս համախմբվել ենք մենքարելու մեր ժողովրդի երախտարժան զավակին, ներշնչվելու նրա ստեղծագործություններով, որոնք գրավում եւ հուզում են ճշմարիտ հայկական մեղեդայնությամբ ու բարձր արվեստով:

Մեր ժողովրդի եւ հայրենի ժառանգության նկատմամբ անհուն սիրով ու նախանձախնդրությամբ Կոմիտաս վարդապետը նվիրվեց մեր հոգեւոր եւ ժողովրդական երգի հավաքման ու մշակման առաքելությանը, որի իրագործումը հայտնություն եղավ ոչ միայն հայ իրականության մեջ, այլեւ ժամանակի համաշխարհային մշակույթի անդամատանում: Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում ուսումնառության տարիներից արդեն նա կարեւորեց հայոց հոգեւոր եւ ազգային երաժշտության անադարտ պահպանությունն ու զարգացումը եւ կուսակրոն քահանայության ուխտը ստանձնելիս ստացավ 7-րդ դարի երախտարժան Հայրապետի՝ շարականագիր ու բանաստեղծ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի մեծարելի անունը: Մեր եկեղեցու հովանու ներքո հայրենի ավանդներով սնված Կոմիտաս վարդապետը, արդարեւ, եղավ գամ-ձապահ մեր ժողովրդի երաժշտական արժեքների: Նա վեր հանեց ու ներկայացրեց հայ երգի հնամենի ակունքները եւ մեր ժողովրդին վերադարձրեց սեփական երգարվեստի ամիսառն ու անկրկնելի բույրն ու երանգը եւ դասական գեղեցկությունն ու բարձր արժեքը: Նման տարողունակ, մանրակրկիտ ու նրբաճաշակ գործ կատարելու համար բավարար չէին երաժշ-

տական մեծ կարողությունները, տաղանդը, որ մանուկ հասակից դրսևորվել էր նրա մեջ, լավագույն կրթությունը, որ նա կատարելագործել էր Եվրոպայում, այլեւ պետք էր նվիրյալ սիրտ՝ զգալու հարազատ ժողովրդի հոգին եւ ունենալու նրա առաջընթացի մեծ ու պայծառ տեսիլքը:

Այս գիտակցությամբ ու նվիրումով էր Կոմիտաս վարդապետը ստեղծագործում, դասավանդում, հիմնում երգչախմբեր եւ հայ երաժշտությունը քարոզում տարբեր երկրների բենահարթակներից՝ հնչեցնելով այն իր բարձրարվեստ մշակումներով, խմբավարությամբ եւ իր անզուգական կատարմամբ: Հոգեւոր երաժշտության հանդեպ խորին ակնածանքով ու հիացումով՝ երանաշնորհ վարդապետը երկնապարգեւ իր տաղանդով ստեղծեց նաեւ երգեր ու մեղեդիներ, մոր մշակումով ներկայացրեց Սուրբ Պատարագի երգեցողությունը, որը հիասքանչ մեղեդայնությամբ պարուրում է հավատացելոց ներաշխարհը, առաջնորդում հաղորդվելու Աստծո հետ, զորանալու Քրիստոսով եւ նրա պարգեւած փրկության հույսով:

Մեր նախնյաց սուրբ հավատքով ու ոգով, հայրենիքի բույր ու գույնով ներծծված իր ստեղծագործությամբ եւ նախանձախնդիր ու նրբաճաշակ երաժշտի իր բարձր արվեստով Կո-

միքն ու ազգային կյանքը»,– ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը նաեւ իր բարձր գնահատանքը հայտնեց Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակի առիթով նամականիշի թողարկման նախաձեռնողներին եւ հոբելյանական հանդիսության կազմակերպիչներին՝ աղոթելով, որ Տերը խաղաղ պահի մեր հայրենիքն ու ժողովրդին եւ օրհնի բոլորի ջանքերը՝ զորացնելու հայրենի երկիրը, ծաղկուն պահելու մշակույթը եւ իրականություն դարձնելու ազգային զարթոնքի մեր նպատակները:

Երեկոյթին համերգային կատարումներով հանդես եկան Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան) եւ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ ՀՀ Ազգային հերոս Հովհաննես Զեքիջյան):

Հանդիսության երեք բաժիններում՝ «Կոմիտաս վարդապետը», «Կոմիտասը եւ Եվրոպան», «Կոմիտասը եւ մենք», հնչած ստեղծագործությունների, դրանց ընտրության եւ Կոմիտաս վարդապետի հանճարի վերաբերյալ համապարփակ բանախոսություն ներկայաց-



միտաս վարդապետը բերեց նաեւ հայկական երգարվեստի եւ մեր ողջ մշակույթի հանդեպ խնամքով վերաբերմունքի պահանջ: Մեր ազգային ժառանգության պահպանումն ու զարգացումը, առաջադիմության, կատարելագործման ձգտումն ու պահանջը մշտապես պիտի լինեն ատաղձը ազգային մեր հավաքական մտածողության եւ ուղեկիցը մեր կրթության ու մեր սերունդների, որպեսզի մեր ինքնության ամուր գիտակցությամբ շենացնենք մեր հայրե-

րեք արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Միքայելյանը:

Մայր Աթոռում կազմակերպված հոբելյանական հանդիսությանը առաջին անգամ կատարվեցին եւ հայ հանդիսատեսի ուշադրությանը հանձնվեցին Կոմիտաս վարդապետի հեղինակած «Հիշողություն» պիեսը՝ լարային նվագախմբի համար եւ «Ամուսնի գիշերը» պիեսը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար:

Ուղերձ՝ Հայաստանի գրողների միության 85-ամյակի առիթով

Բեկտեմբերի 5-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի գրողների միության 85-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունը:

Այս կապակցությամբ ՀԳՄ-ի նախագահ Էդվարդ Միլիտոնյանին եւ միության անդամներին շնորհավորական ուղերձ էր հղել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Նորին Սրբության շնորհավորական խոսքում մասնավորապես ասված է.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայաստանի գրողների միության 85-ամյակին նվիրված տոնական հանդիսության մասնակիցներին:

Հսկայական եւ գրականության դերը հասարակական եւ ազգային մեր կյանքում: Իբրեւ խոսքի մշակույթ՝ այն մտածողություն է կերտում, ձեւավորում հայացք կյանքի եւ աշխարհի նկատմամբ: Մեր գրականությունը դարեր շարունակ արտացոլել է հայ ժողովրդի կյանքն ու ձգտումները, հաղթանակներն ու տառապանքները, հաճախ նաեւ՝ որոնումներն ու վայրկյանները: Այն կրթել է մեր ժողովրդի հոգին ու միտքը, եղել նրա ինքնության նախանձախնդիր պահպանը, ներգործում ուժականությամբ միավորել աշխարհասփյուռ մեր ժողովրդին ազատ ու անկախ հայ-

րենիքի, հայոց բարոյ կյանքի տեսլականի շուրջ: Գրականությունը յուրօրինակ դարբնոց է. գրողն իր անդուլ աշխատանքով արծարծում է ներկայի իրողությունները, կռում ազգի ամուր եւ անխելի կապը անցյալի եւ ապագայի հետ, անջնջելիորեն դրվագում նրա արժեքները, նշմարում եւ հավերժացնում հերոսականն ու անամբը: Արդարեւ, մարդկային կյանքը միշտ կարիքն ունի անհրաժեշտ խոսքի՝ բարի խորհրդի, ազնիվ զգացումի, արդար գնահատման, քաջակերության, կարիքն ունի հույսի, հավատի, առ Աստված ապավինության, որպեսզի ընթանա դեպի ապահով, խաղաղ, երջանիկ ապագա:

Մեր ժամանակներում, երբ աշխարհում տարատեսակ համահարթեցման գործընթացների հետեւանքով խեղաթյուրվում են արժեքները, նահանջ ապրում հոգեւորն ու ազգայինը, առավել կարեւորվում են նաեւ գրականության դերն ու առաքելությունը՝ որպես մարդկային բարձր արժեքներ կրթելու, աշխարհայացք եւ ինքնություն ձեւավորելու միջոց: Հայ գրականությունը կոչված է նաեւ ազգային միասնության ամրապնդմանը: Այս առումով չափազանց մեծ նշանակություն ունի սփյուռքի եւ սփյուռքահայ գրողների հետ համագործակցությունը, սփյուռքահայությանը հուզող խնդիրների արտացոլումը արդի գրականության մեջ:

Անգնահատելի է Գրողների միության դերը՝ համախմբելու գրական մշակներին, անդրադառնալու ազգային գրականության զարգացման հեռանկարներին, ճշմարիտ գնահատականը


տալու ժամանակի բերած հարցերին, խրախուսելու գրական ասպարեզում առաջին քայլերը կատարողներին: Այսօր, սիրելիներ, ձերն է պատասխանատվությունը՝ միության տասնամյակների ավանդներին հավատարիմ՝ մեր գրականությունն ու մշակույթը հարազատ պահելու իր ճշմարիտ նպատակին, հարստացնելու արժեքավոր գրական գործերով, որպեսզի դրանք շարունակեն ուղեկիշ լինել մեր հայրենիքի եւ ազգային կյանքի զորացման մարտահրավերներում:

Այս ուրախալի առիթով հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Գրողների միության նախագահին, վարչությանը, միության անդամներին՝ իրենց ներդրած ջանքերի, հայ գրականության մեջ բարի ավանդի համար: Աղոթքով ենք հիշում միության հանգուցյալ մեծանուն անդամներին եւ մեր ժողովրդին մատուցած նրանց նվիրյալ ծառայությունը: Գրական ասպարեզի բոլոր նվիրյալներից մաղթում ենք ստեղծագործական մոր ներշնչանքներ եւ ձեռքբերումներ՝ ի շահ մեր մշակույթի եւ ազգային կյանքի զորացման ու հարստացման:

Հայցում ենք երկնավորից, որ Աստծո ամենախնամ Սուրբ Աջի պահպանության եւ օրհնու-

թյան ներքո ծաղկեն ու բարգավաճեն հայրենի մեր երկիրն ու բարեսեր ժողովուրդը:

«Շնորհ, սէր եւ ողորմութիւն Աստուծոյ եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան, այսօր եւ միշտ. ամեն»»:



Սիլվա Կառուսիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիսաժողով Մայր Աթոռում

Նոյեմբերի 29-ին, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գաբեգին Ա» կրթական կենտրոնում տեղի ունեցավ գիսաժողով՝ նվիրված բանաստեղծուհի, հրապարակախոս Սիլվա

քում: Ստեղծագործական առաջին քայլերից ի վեր նա արժանիորեն զգաց եւ վայելեց մեր ժողովրդի սերն ու գնահատանքը, բանգի իր աստվածատուր տաղանդը, բեղուն գրիչը ողջ նվիրումով ծառայեցրեց հարազատ ժողովրդին, նրա իղծերի արտահայտմանը, նրա իղծերին ու արդար դատին:

Մորաճակախ պետականության ամրապնդմանը եւ մեր ժողովրդի առջեւ լեռնացած դժվարությունների հաղթահարմանը:

Այսօր առանձնակի զգացումներով ենք հիշում նաեւ, թե որքան ջերմությամբ էր Սիլվա Կապուտիկյանը կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին,

քում եւ վառ պահելով մեր ժողովրդի իղծերն ու տեսիլքները:

Մեր գնահատանքն ենք բերում այս գիսաժողովի կազմակերպիչներին եւ վերստին Սեր բարեմաղթանքներն ու հայրապետական օրհնությունն ենք բերում ձեզ՝ բոլորիդ:



Նրա ստեղծագործությունը՝ արձակ թե բանաստեղծություն, շնորհալի խոսքով գովքն է հայրենիքի, վերհուշը մեր պատմության, նրա սլացքների ու վշտերի եւ ապագայի հանդեպ լուսավոր հավատի: Արդարեւ, նրա ստեղծագործությունը պահապան գինվորի պես հսկում է հազարազանծ մեր լեզվի մաքրությունը, մեր ժողովրդի զավակաց սրտերում հայրենյաց սիրուն, որպեսզի ազգս



Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակին: Գիսաժողովը կազմակերպվել էր Մայր Աթոռի եւ «Սիլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Ներկաներին ողջունեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Գիսաժողովի մասնակիցներին իր հայրապետական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Նորին Սրբություն Գաբեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետը:

«Ողջունում եւ հայրապետական Սեր օրհնությունն ենք բերում այս գիսաժողովի մասնակիցներին, որ համախմբվել ենք երախտիքի տուրք մատուցելու մեծանուն գրող, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին՝ մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակին՝ ծննդյան 100-ամյակի առիթով:

Հոգեւոր Սիլվա Կապուտիկյանը մեր մոր գրականության մեջ կարելու ավանդ ու ժառանգություն է թողել, որին մեր ժողովրդը լավ ծանոթ է ինչպես հայրենիքում, այնպես եւ սփյուռ-

հայոց միավորված լինի իր սրբազան, աստվածապարզեւ հայրենիքով եւ միշտ հարազատ իր ինքնությանը՝ կերտի իր կյանքը:

Հայրենակենտրոն ուղղվածության հետ բարձր արժեք ունեն տաղանդաշատ բանաստեղծուհու խոհական եւ քնարական ստեղծագործությունները, որոնք անձնական ապրումներից ու մտորումներից վերածվում են համամարդկային զգացումի: Այդ համընդհանուր ընդգրկումի շնորհիվ նրա գրական գործերը հարազատ են նաեւ այլազգի ընթերցողներին եւ թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Իր բեղուն գրչով, իր գործունեությամբ, նաեւ շրջագայություններով հայկական գաղթօջախներ՝ Սիլվա Կապուտիկյանը նպաստեց աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությանը, հայրենիքի եւ սփյուռքի կապերի ամրապնդմանը: Նա առանց վարանելու մասնակցեց Արցախի ազատագրման շարժմանը՝ իր ելույթներով ու հրապարակախոսություններով ջանքեր բերելով մեր ժողովրդի զավակաց իրավունքների պաշտպանությանը: Նա իր ուժերը նվիրեց նաեւ մեր

մեր Սուրբ Եկեղեցուն: Հիշում ենք գրական գործիչների ու մտավորականների հետ նրա այցերը երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետին, ինչը խորապես արտահայտում էր մեր Եկեղեցու դարավոր առաքելության կարեւորումը մեր ժողովրդի կյանքում: Քաղցրությամբ ենք հիշում նաեւ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծանուն բանաստեղծուհուն շնորհեցինք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը՝ գնահատելով մեր լեզվի, մեր գրականության աննկուն ու նվիրյալ մշակի երախտիքն ու վաստակը:

Սիրելիներ, Սիլվա Կապուտիկյանի 100-ամյակը մշելով՝ մեր ժողովուրդն արժեւորում է նրա կյանքն ու ստեղծագործությունը, անդրադարձ կատարում իր պատմության որոշակի շրջանին, հաստատում այն արժեքները, որոնցով մեզում է ապրել ու դրանք փոխանցել սերնդեսերունդ: Մենք հավատում ենք, որ Սիլվա Կապուտիկյանի գործերն այսօր եւ ապագայում մերձիկման աղբյուր են լինելու մեր շատ զավակների համար՝ ապրեցնելով ստեղծագործելու ջիղը մեր կյան-

թող մեր ժողովրդի սրտում մշտավառ մնա Սիլվա Կապուտիկյանի եւ ազգիս մեծանուն զավակների հիշատակը՝ նրանց պատգամներով եւ օրինակով ապրելու առ Աստված հավատքով, առ հայրենին անմկազ սիրով, պայծառ զայիքի հույսերով: Եվ թող ամենակարողն Աստված Իր Սուրբ Աջի եւ շնորհների մերքո խաղաղության մեջ պահպանի մեր հայրենիքը եւ օրհնի ու գորակից լինի աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ իրագործելու մեր ազգային նվիրական, դարավոր իղծերը:

Թող Փրկիչ մեր Տիրոջ, Հիսուս Քրիստոսի սերն ու ողորմությունը լինեն մեզ հետ եւ բոլորի՝ այսօր եւ միշտ. ամեն»,– ասաց Վեհափառ Հայրապետը:

Ողջունի խոսքով հանդես եկավ նաեւ «Սիլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ տ. գ. դ, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանը:

Գիսաժողովին ներկայացվեցին բանախոսություններ ու զեկույցներ անվանի բանաստեղծուհու կյանքի, գործունեության եւ ստեղծագործական վաստակի վերաբերյալ:

ԵՀԽ-ի հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի օրհնակի ամսագրի ժողովը

Նոյեմբերի 10-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս իր օրհնությունը բերեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գաբեգին Ա» կրթական կենտրոնում անցկացվող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տարեկան ամփոփիչ ժողովի մասնակիցներին:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով եւ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մուշեղ եպս Բաբայանի ողջույնի խոսքով: Մուշեղ սրբազանը կարեւորեց «Կլոր սեղան» հիմնադրամի կողմից տարաբնույթ ծրագրերի իրականացումը, որոնց շնորհիվ մեկ գաղափարի շուրջ են հավաքվում Եկեղեցիների եւ տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Սրբազանի խոսքով՝ հիմնադրամն իր գործունեությամբ իրականացնում է Քրիստոսի՝ միմյանց սիրելու կարեւորագույն պատգամը:

Այնուհետեւ ներկաներին իր հայրապետական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ զնահատանքով անդրադառնալով 22 տարվա այն արգասավոր գործունեությանը, որ Մայր Աթոռի եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից հաստատված «Կլոր սեղան» հիմնադրամն իրականացրել է Եկեղեցիների եւ տարբեր կազմակերպությունների հետ համատեղ՝ ծառայելով մեր ժողովրդի եւ հայրենիքի կարիքներին:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարբեր կառույցների եւ թեմերի հետ արդյունավետ համագործակցությունը:

«Այս տարիների ընթացքում մենք հետեւել ենք «Կլոր սեղան» հիմնադրամի աշխա-



տանքներին եւ ուզում ենք բարձր գնահատել այն նվիրումն ու հանձնառության ոգին, որ տիրում են այս կառույցում: Իր գործունեությամբ հիմնադրամն արձագանքում է բոլոր այն խնդիրներին, որոնք առկա են հանրային մեր կյանքում՝ փորձելով, Եկեղեցու հայացքներն ու դիրքորոշումները հիմք ունենալով, օգտակար ծառայություն բերել մեր ժողովրդին»:

Նորին Սրբությունը մասնավորապես առանձնացրեց համայնքների համապարփակ զարգացմանն ուղղված սոցիալական ու կրթական ծրագրերը, տարածաշրջանում խաղաղության վերահաստատմանն ու ժողովուրդների միջեւ հաշտությանն ուղղված «Հայաստանը եւ հարեւանները» ծրագիրը, ինչպես նաեւ Եկեղեցականների հովվական առաքելությանն ի նպաստ կազմակերպվող

վերապատրաստման եւ փորձառության փոխանակման դասընթացները: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ հիմնադրամի գործադիր տնօրեն ղոկտոր Կարեն Նազարյանը: Ներկայացվեցին հաշվետու զեկույցներ՝ ըստ հիմնադրամի գործունեության ոլորտների:

Միջոցառմանը ներկա էին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները եւ գործընկեր կազմակերպությունների ու կառույցների ներկայացուցիչները, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Միխայել Յոհաննես Բանցհաֆը, Եվրոպական Միության պատվիրակության մորանշանակ ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը, Մայր Աթոռի միաբաններ, թեմերում սպասավորող եկեղեցականներ եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց...

Սկիզբը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով արձանագրեց, որ արդի աշխարհում ընտանիքի ավանդական ընկալումը ենթարկվում է ձեւախեղումների, աղավաղվում է ոչ միայն «ընտանիք» հասկացությունը, այլեւ փորձ է արվում արժեզրկել ընտանիքի հետ շաղկապված մի շարք կենսական իրողություններ՝ սիրո զգացումը, սրբության ընկալումը, ընտանեկան հարաբերությունների մեջ պատասխանատվությունը, զոհողության ոգին: Նորին Սրբությունն ասաց, որ հարկավոր է գերծ պահել ազգը մերմուծող այն արատավոր երեւոյթներից, որոնք այսօր ներկայացվում են իբրեւ մարդու իրավունք կամ ազատության դրսեւորում:

Այդ փորձությունների հաղթահարման եւ քրիստոնեական ընտանիքների զորացման գործում Վեհափառ Հայրապետը կարեւորեց Հայ Եկեղեցու եւ հոգեւոր հովիվների առաքելությունը՝ մշելով, որ քահանաները կոչված են ոչ միայն իրենց երեխաներին հայր լինելու, այլեւ հայրաբար խնամելու հավատացյալներին: Հոգեւոր հովիվների առաքելային ծառայությունը պետք է լինի հայ ընտանիքի զորացումը հոգեւոր եւ բարոյական արժեքներով, որոնցով է միայն հնարավոր երաշխավորել հայրենիքի անսասանությունը, շեն ու պայծառ ազգային կյանքը: «Որքան փարված լինենք ազգային ու հոգեւոր արժեքներին, այնքան զորեղ կլինենք եւ առաջընթաց կարձանագրենք մեր կյանքում»,– ասաց Վեհափառ Հայրապետը՝ եկեղեցականներին հանձնարարելով առավել մեծ ուշադրություն դարձնել երիտասարդության հետ տարվող աշխատանքներին, նրանց մեջ ավանդական, քրիստոնեական ընտանիքի վերաբերյալ ընկալումների ձեւավորմանը եւ հոգեւոր արժեքների սերմանմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշեց, որ քահանան իր բազմազավակ ընտանիքով պետք է լավագույն օրինակը լինի համայնքի համար:

Վերջում իր գնահատանքը հայտնելով ներկաներին՝ Նորին Սրբությունը հայցեց, որ Տերն Իր մշտական օրհնության մերքո երջանկության, սիրո եւ խաղաղության մեջ պահի բոլոր հայ ընտանիքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը քահանաների զավակներին մղերմեք ընծայեց, որից հետո նրանք այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:

«Հայրենիքի եւ ընտանիքի գաղափարները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրաժարականություններում» թեմայով գիտաժողով Մայր Աթոռում

Դեկտեմբերի 6-ին, նախագահությամբ Ս. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի

սի կենտրոնի հավատքի լույսը, որը փոխանցել են մեր սուրբ հայրերը: Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հոգևոր խոսքը, գիտական միտքը շարունակեցին պտղաբերել նվիրյալ ու լուսամիտ եկեղեցա-

յին միասնության ու ամրության անխախտ պատվար, պիտի շարունակի իր ջանքերը այդ արժեքների անխաթար ու հարատև պահպանման եւ, եթե հարկ է, նաեւ՝ առողջացման համար: «Էջմիածին» ամսագրի հո-

բիոնի վարիչ, փ. գ. դ. Սեյրան Չաքարյան), «Ներսես Աշտարակեցու հայրենասիրությունը եւ ազգային խնդիրները Մայր Աթոռի հրատարակություններում» (ՀՀ ԳԱԱ-ի պատմության



ունեցավ «Հայրենիքի եւ ընտանիքի գաղափարները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակություններում» խորագրով գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ՝ «Էջմիածին» ամսագրի 75-ամյակի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 2019 թ. «Ընտանիքի տարի» հռչակելու շրջանակներում:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ Մայր Աթոռի հրատարակական բաժնի տնօրեն Արարատ քին. Պողոսյանը: Այնուհետեւ գիտաժողովի մասնակիցներին իր հայրապետական պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը.

«Գիտաժողովի սիրելի մասնակիցներ, Հոգու բերկրանքով ողջունում եւ հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ, որ սիրով ու պատրաստակամությամբ արձագանքել էք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրավերին եւ այսօր մատենադարանի կամարների ներքո համախմբվել էք այս գիտաժողովին՝ նվիրված «Էջմիածին» ամսագրի 75-ամյակին: Ուրախ ենք, որ 2019 թվականն «Ընտանիքի տարի» հռչակված լինելու առիթով գիտաժողովը կարեւորելու է «Էջմիածին» ամսագրում եւ Մայր Աթոռի հրատարակություններում հայրենիքի եւ ընտանիքի գաղափարների արժարժույթը: Արդարեւ, ազգն ամուր է ընտանիքով, եւ հայրենիքն ու պետությունը ամուր են ընտանիքներում խնամված արժեքներով ու սնուցված ոգով: Աստվածամերձ տարիներին ընտանիքներում պահպանված քրիստոնեական ավանդներով մեր ժողովուրդը չհեռացավ իր Եկեղեցուց եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ միշտ անսալով իր հավատքի դարավոր օրրանի հոգեխնամ ձայնին եւ օրհնաբեր ներկայությանը իր կյանքի բոլոր բնագավառներում:

«Արարատ» ամսագրի ընդհատված լուսավորական առաքելության շարունակողը եւ Հայ Եկեղեցու վերագործունեի բարեխոս խորհրդանիշը դարձավ «Էջմիածին» ամսագիրը: Երկրորդ աշխարհամարտի ծանր տարիներին երջանակափշտակ Գեւորգ Զ Չորեքյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով վերահաստատված Մայր Աթոռի պարբերականը՝ հակառակ առկա արգելքներին ու հետապնդումներին, համարձակ խոսեց իր հավատավոր զավակների հետ՝ նրանց ջանքերով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստո-

կանաց շնորհիվ, որոնք Աստծու բարերար կամոք այդ բարդ ժամանակներում կարգվել էին հովվելու Տիրոջ հոտը:

Եկեղեցականների եւ մտավորականների հոգևոր, բարոյախրատական քարոզների, աստվածաբանական, հայագիտական արժեքավոր ուսումնասիրությունների շնորհիվ անխաթար մնացին մեր ժողովրդի կյանքն ու հաղորդակցությունը նախնայաց սրբազան ժառանգության հետ: Ինքնաճանաչման ու շարունակ հոգևոր նորոգության ու զարգացման այս ուղիով մեր ժողովուրդը պիտի մնա հզոր մշակույթ եւ հոգևոր ուրույն դիմագիծ ունեցող ազգերի շարքում՝ միշտ հավատարիմ իր հավատքին ու սրբություններին, արարատահայաց իր հայրենիքին, իր ինքնությանն ու արժեքներին:

Հայրենիքի խաղաղ կյանքն ու առաջընթացը եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի համայնքումը հայրենիքի շուրջ մշտապես եղել եւ մնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության կարեւոր համեմատություններից: Այդ առաքելությունից անմասն չեն մնացել Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրն ու մնացյալ հրատարակությունները:


Սուրբ Էջմիածնի ինչպես պարբերական, այնպես եւ ոչ պարբերական հրատարակություններում չեն պակասել հայրենաճանաչությանը, մայր հայրենիքի հանդեպ սիրո ու նվիրումի, ազգային ինքնության ձեռնավորմանը վերաբերող նյութերը: Այդ ոգով «Էջմիածին» ամսագիրը իր նպաստն է բերել մայր հայրենիքում եւ սփյուռքում ազգային դիմագիծն ու գիտակցությունն ունեցող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Երանաշնորհ Գեւորգ Զ Չորեքյան Կաթողիկոսի բնորոշմամբ՝ ամսագիրն այն միջոցն էր, որը պետք է համախմբեր սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան հայրենիքի ու Մայր Աթոռի շուրջ:

Այսօր մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ հայրենիքի եւ ընտանիքի ազգային մեր ընկալմանն առնչվող արժեքները տարատեսակ մտայնությունների եւ ազատական գաղափարախոսությունների պատճառով ենթարկվում են մշտական հարձակումների ու հարվածների: Եկեղեցին, որպես հոգևոր անառիկ բերդ եւ ազգա-

րուն ներգրավված նախկին եւ ներկա բոլոր աշխատակիցներին, աղոթքով հիշեց նաեւ բազմամյա այս ծառայության ընթացքում նվիրումով եւ սիրով ամսագրի անխափան լույս ընծայման պատասխանատվությունն ստանձնած երախտաբաժնի բոլոր խմբագիրներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բարձրալի օրհնությունը հայցեց գիտաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր մասնակիցներին՝ գիտաժողովի աշխատանքներին մաղթելով արդյունավոր ու բարի ընթացք:

Այնուհետեւ գիտաժողովն սկսեց իր աշ-



խատանքը: Չորս նիստի ընթացքում ներկայացվեցին հետևյալ զեկույցները՝ «Հայրենիքի գաղափարը 1914–1920 թվականների Մայր Աթոռին առնչվող փաստաթղթերում» (Հայաստանի ազգային արխիվի տնօրեն, պ. գ. դ. Ամատունի Վիրաբյան), «Հայրենիքի եւ ընտանիքի գաղափարը Ս. Էջմիածնի հրատարակություններում՝ Հայաստանի երրորդ Հանրապետության շրջանում» (ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ. Էդիկ Մինասյան), «Խրիմյան Հայրիկի դաստիարակական հայացքները Մայր Աթոռի հրատարակություններում» (ԵՊՀ-ի հայ գրականության պատմության ամբիոնի դասախոս, բ. գ. թ. Սերժ Սրապիոնյան), «Հայրենիքի եւ հայրենասիրության թեման «Էջմիածին» ամսագրում (1940–1960-ական թվականներ)» (ԵՊՀ-ի փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության, տեսության եւ տրամաբանության ամ-

են ընտանիքի թեմայի արծարծումը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Մայր Աթոռի տպագրած գրքերում» (ՀՀ ԳԱԱ-ի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Համո Սուքիասյան, ՀՀ ԳԱԱ-ի պատմության ինստիտուտի հայցող Հայկուհի Առաքելյան), «Հայության մեծագույն խորհրդանիշը, որի լույսը ուժ եւ կորով է տվել ժողովրդին» (ՀԱԱՀ-ի «Հասուն Հասկ» պաշտոնաթերթի գլխ. խմբագիր, բ. գ. թ. Անի Խուզավերյան), «Անդրադարձ-

ներ ուղեգրության եւ ուխտագնացության ժանրերին» (Երեսանի Ն. Գոգոլի անվան №35 դպրոցի տնօրեն, բ. գ. թ. Ասատուր Սարյան), «Հայ գաղթականության եւ ներգաղթի խնդիրների արծարծումը «Էջմիածին» ամսագրում» (Խ. Աբովյանի անվան ՊՄՀ-ի դասախոս, ՍՎԴ-ի, ԳՀԶ-ի դասախոս, պ. գ. թ. Ավետիս Հարությունյան), «Ազգակցական կապեր մատնանշող հայերեն եզրեր եւ ընտանեկան հարաբերությունները վաղմջագույն ժամանակներում» (Լ. Ստեփանյան, Վ. Բյուրուկի անվան ՊՄՀ), «Հայոց եղեմը արքեպիսկոպոս Օրմանյանի խոհագրության եւ Հրամոտ Մաթեոսյանի ստեղծագործության մեջ» (ԳՊՀ-ի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, ՍՎԴ-ի, ԳՀԶ-ի դասախոս, բ. գ. դ. Վաչագան Գրիգորյան):

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ծննդյան 200–ամյակին ընդառաջ (1820–1901)

Սկիզբը՝ թիվ 22

Ղ. Ալիշանը հրատարակել է նաև լեհահայոց պատմությանը վերաբերող անչափ կարևոր մի վավերագիր՝ «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումնիոյ» (1896) խորագրով:

Ղ. Ալիշանն առաջինն է ուշադրության արժանացրել միջնադարյան հայ ձեռագրերում պահպանված ժողովրդական երգերը եւ 1852 թ. դրանք հրատարակել «Հայոց երգք ռամկականք» խորագրով ժողովածուում, որի էջերում հայերեն բնագիրը ներկայացված է հանդիպադիր անգլերեն թարգմանությամբ: Ամերիկացի ակամավոր գրող Չեմրի Լոնգֆելլոն՝ «Հայավաթի երգը» վիպերգի հեղինակը, այդ գրքից է օգտվել կատարելով մի քանի հայկական երգերի անգլերեն թարգմանությունները՝ «Արագիլ», «Մանուկն ու ջուրը» եւ այլն:

Բազմաթիվ լեզուների տիրապետումը եղել է Ղ. Ալիշան գրողի, գիտնականի եւ թարգմանչի խոշոր առավելություններից մեկը: Նա բանաստեղծություններ է թարգմանել Հ. Լոնգֆելլոյից, հատվածներ Զ. Բայրոնի «Չայլդ Հարոլդի երգը» վիպերգից եւ այլն: Սակայն օտար լեզուների իմացությունը ոչ միայն ընդլայնել է նրա տեսադաշտն ու մտահորիզոնը, այլեւ ավելի արդյունավետ է դարձրել մանավանդ օտարալեզու սկզբնաղբյուրների եւ բնագրերի ուսումնասիրությունը, որով հնարավոր են դարձել շատ բանասիրական ճշգրտումներ եւ գիտական կանխատեսումներ: Բավական է հիշել թեկուզ միայն «Հայապատումի»՝ հայ գրերի գյուտին ու Մաշտոցի գործունեությանը վերաբերող նրա տողատղի մի կարևոր ծանոթությունը, որ նկատելի ու արժեւորել է հայագետ Ն. Ադոնցը, հասկանալու համար, թե ինչ հզոր դիտողականություն է ունեցել Ալիշան հայագետը: Հունական աղբյուրներում գտնելով վկայություններ նեստորականության աղանդի հիմնադիրն ուսուցիչ, 4-րդ

դ. երկրորդ կեսի եւ 5-րդ դ. սկզբի հույն հոգեւորական Թեոդորոս Մափսուեստացու թղթում հիշատակվող Մաստուբիոսի մասին՝ Ղ. Ալիշանը ճիշտ կռահել է, որ այդ անձնավորությունը, որը խոսքով Դ-ի արքունիքից հեռանալով՝ դարձել է հոգեւորական ու իրեն մկիրել ճգնակեցության ու մտավոր գործունեության, Մեսրոպ Մաշտոցն է եղել, որ 390-ական թթ. նաեւ նրա օգնությամբ է դիմած եղել հայերեն գրերի ստեղծման որոնումների ճանապարհին: Իսկ թե ինչո՞ւ Մաշտոցի վարքագիր Կորյունը, ապա եւ հորեմացին ու Փարպեցին շրջանցել ու չեն վկայակոչել Թեոդորոս Մափսուեստացուն, պատճառը մի դավանաբանական խնդիր է, որ առնչվում է Ալեքսանդրիայի եւ Ամստիդիի աստվածաբանական դպրոցների հակասություններին:

Կոստանդնուպոլսի հույն պատրիարք Նեստորը (428–431), Ամստիդիի հոգեւորականների հետ միասին, քարոզում էր մի վարդապետություն, ըստ որի՝ Հիսուս Քրիստոսն ընդունելի չէր որպես միավորյալ աստվածություն, այլ ուներ երկակի դեմք՝ մարդկային եւ աստվածային: Այսինքն՝ սբ Կույս Մարիամից ծնվելը, կրած չարաբանքներն ու խաչի վրա զոհվելը Նրա մարդկային բնույթի արտահայտությունն են, իսկ բժշկություններն ու մյուս հրաշագործությունները՝ նշանները, սքանչելիքները, գործերը եւ համբարձվելը՝ աստվածային: Այդ ուսմունքը աստվածային զորությունից զրկում էր նաեւ Մարիամ Աստվածածնին, որին արդեն նույնիսկ Մարդածին էին անվանում: 431 թ. հունիսի 22-ին կայացած Եփեսոսի Գ տիեզերական ժողովում Ալեքսանդրիայի դպրոցը, չսպասելով Ամստիդի դպրոցի ժամանելուն, 200 վարդապետի ստորագրությամբ դատապարտել ու բանադրել էր Պոլսի պատրիարք Նեստորին ու նեստորականությունը: Ուշ եկած անտիոքական 54 վարդապետ հակառակ որոշումն է կայացրել ընդդեմ Կյուրեղ Ալեքսանդրացու, սակայն հաղթողը վերջինս էր, ուստի վճռվեց աքսորել Նեստո-

րին ու նրա համախոհներին: Եփեսոսի Գ տիեզերաժողովի որոշումներն ընդունելով՝ Նեստորին ու նեստորականությունը 435 թ. վճռաբար մերժել էր նաեւ Հայ Եկեղեցին, ուստի հայ մատենագիրները, որ նույնպես հոգեւորականներ էին եւ ընդունում էին Քրիստոսի մարդկային եւ աստվածային միավորյալ բնությունը, չէին կարող հիշել Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մափսուեստոսին:

Ղ. Ալիշանը հայ հայրենագիտության հիմնադիրն է, առանց նրա հիմնարար, կոթողային աշխատությունների անհնար է լիարժեք պատկերացում կազմել Հայոց աշխարհի, հայ ժողովրդի եւ նրա ստեղծած պատմամշակութային արժեքների մասին: Նա ստեղծել է հայոց մատենագրությունը, պատմությունն ու աշխարհագրությունը, ազգագրությունն ու ժողովրդական երգը, բնաշխարհը՝ իր բուսամուկներով ու տեղանուններով, հոգեւոր ու աշխարհիկ պատմամշակութային հուշարձանները, բանահյուսությունն ու հավատալիքները համակողմանիորեն ուսումնասիրող գիտաճյուղերի մի ամբողջ համակարգ՝ առանց որի անհնար է պատկերացնել հայագիտությունն ու նրա զարգացումն առհասարակ: Այս ամենով հանդերձ՝ Ղ. Ալիշանը սերտորեն կապված էր իր ժամանակի գիտական ու գրական-մշակութային կյանքին եւ նպատակասլացորեն ջանում էր «գիտությունը ժողովրդականացնել», իր գիտական ու գեղարվեստական գործերով արժեւորել բնիկ Հայրենիք Հայաստան-



նը եւ այն թողնել հայության նոր սերունդներին, ինչպես դա արել է «Հուշիկը հայրենյաց Հայոց» երկհատոր (1869 եւ 70) պատմագեղարվեստական հուշումնառատ ակնարկում՝ Հայաստանն իր աշխարհագրական տարածքով, սուրբ նախնիների հայրենավեր գործերով, իր պատմական հիշատակներով նոր սերունդների խորհրդանշական ներկայացուցիչ Հայկակին կտակելով: Ահա ինչ է նա պատգամել հայ սերունդներին. «Ծննա-րիտ հայրենասիրությունն չէ ասուպ կամ փայլակ մը հանկարծ երեւցող է անցնող, որ հուր մոլի եւ թափառիկ, եւ ոչ կայծակն անկուշտ այրող, լափող, այլ հանդարտ ջերմություն մը՝ հստակ լույսով, անըստոյտ խղճով...»

Շարունակությունը՝ էջ 8

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ԴԱՏԵՐԱԶՍ

Սկիզբը՝ թիվ 21–22

Ելույթներին հաջորդել է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, պրոֆեսոր Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի անդրանիկ դասախոսությունը՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմայով: Մեսրոպ արքեպիսկոպոսը մկիրյալ հայրենասեր էր, իսկական մտավորական, տիրապետում էր մի քանի օտար լեզվի:

Նա ծնվել է 1865 թ. Ձանգեզուրի Շիկահող գյուղում: 1882 թ. ավարտել է Շուշիի թեմական, 1885 թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1890 թ.՝ Դորպատի համալսարանը: Մասնագիտական գիտելիքները համալրել է կատարելագործել է Վիեննայում, Փարիզում, Երուսաղեմում, Լոնդոնում, Բեռլինում եւ Վենետիկում: 1895–1898 թթ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնգրակներով նշանակվել է Երեսանի թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեսուչ, Շուշիի հոգեւոր թեմական դպրոցի տնօրեն: 1902 թ. Սանկտ Պետերբուրգի համալսարանում պաշտպանել է ատենախոսություն *(տե՛ս Երեսանի պետական համալսարան, Կենսագրական հանրագիտարան, խմբ.՝ Ա. Սիմոնյան, եր., 2009, էջ 5)*: Նշանակվել է Էջմիածնի սինոդի անդամ, Գեորգյան ճեմարանի տեսուչ, ձեռնադրվել եպիսկոպոս: Հաշվի առնելով նրա գիտակրթական մակարդակն ու մանկավարժական հարուստ փորձը, կազմակերպչական ունակությունները՝ նրան հրավիրել էին Հայաստանի նորաբաց համալսարան՝ որպես հայ գրականության եւ կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր եւ պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան (1919 թ. հունիսից մինչեւ 1920 թ. դեկտեմբեր): Մի տարուց ավելի ժամանակահատվածում նրան հաջողվեց մեծածավալ աշխատանքներ կատարել ոչ միայն ֆակուլտետի ուսումնական գործընթացը կազմակերպելու, այլեւ գիտական աշխատանքներ հրատարակելու ուղղությամբ:

Համալսարանի բացման արարողությունը վերածվեց իսկական տոնախմբության:

1920 թ. հունվարի 31-ին համալսարանի եւ նրա անդրանիկ ֆակուլտետի բացման օրը լույս տեսավ «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը, որի վաճառքից ստացված եկամուտը հատկացվեց չքավոր ուսանողների օգնության ֆոնդին *(տե՛ս Երեսանի պետական համալսարան,*

Կենսագրական հանրագիտարան, խմբ.՝ Ա. Սիմոնյան, եր., 2009, էջ 5):

«Հայաստանի համալսարան» թերթում, բացի համալսարանի ղեկավոր (տեսուչ) 3. Ղազարյանի հոդվածից, տպագրվել են նաեւ ֆակուլտետի դեկան Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի «Ողջւնյւն, Հայաստանի համալսարան», ֆակուլտետի դասախոսներ Երվանդ Տեր-Սիմասյանի «Հայաստանի համալսարանը», Ստեփան Մախասյանցի



«Համալսարանը եւ լեզուն», 1920 թ. հունիսից դեկանի պաշտոնակատար Գարեգին եպս Յովսեփյանի «Երմզ, թե՛ իրականություն» հոդվածները: Հետաքրքիր է, որ թերթում հրատարակվել է նաեւ համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի (1920 թ. փետրվար-մայիս) դասացուցակը: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի դասերն սկսվել են փետրվարի մեկից եւ տեւել մինչեւ հունիսի մեկը: Նշվել են նաեւ դասավանդող առարկաներն ու նրանց ժամաքանակը, դասախոսների անուն-ազգանունները: Հաշվի առնելով ունկնդիրների իմացության մակարդակն ու նրանց հետաքրքրությունները՝ շրջանակը՝ դասա-

խոսություններն սկսվել են երեկոյան ժամը հինգից՝ յուրաքանչյուր առարկան երկուական ժամով: Անպատրաստների համար նախատեսվել է եւս երկու ժամ (հատկապես գրաբար եւ ֆրանսերեն առարկաներից): Ըստ դասացուցակի՝ առաջին կիսամյակում դասավանդել են պրոֆեսոր Մեսրոպ եպիսկոպոսը (հայ գրականության հին շրջան), Երվանդ Տեր-Սիմասյանը (հայոց պատմության հին շրջան), դոցենտ Ս. Մախասյանցը

ֆակուլտետի պրիվատ-դոցենտ եւ ընդհանուր պատմության դասախոս:

Այսպիսով՝ պատմալեզվաբանական ֆակուլտետն աստիճանաբար համալրվել է բարձրորակ մասնագետներով: Ֆակուլտետի բացման ժամանակ ունկնդիրների թիվը եղել է 262, իսկ դասախոսներին՝ 32:

Առաջին օրը՝ փետրվարի մեկին, առաջին հանդիսավոր դասախոսությունը կարդալու պատիվը վիճակվել է անվանի գիտնական, հայագետ Ստեփան Մախասյանցին: Բացի ուսանողներից՝ դասախոսությանը ներկա են եղել նաեւ ՀՀ հանրային կրթության նախարարը, համալսարանի ղեկավարը, նրա օգնական-կազմակերպիչը, ֆակուլտետի դասախոսները եւ ուրիշներ: Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի ուսումնագիտական եւ կազմակերպչական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակում դեկան Մեսրոպ եպս Տեր-Մովսիսյանի, դեկանի պաշտոնակատարներ Գարեգին եպս Յովսեփյանի ու Հակոբ Մանանդյանի զեկուցագրերը եւ ֆակուլտետի ժողովների նիստերի արձանագրությունները, որոնք հաշվետվություններ են կատարված աշխատանքների մասին *(տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թթ. 190, 191)*: Դրանք մեզ տեղեկություններ են տալիս մասնագիտական գրականության ծեռքերման ղեկավարությունների, ուսումնական գործին առնչվող հայրենամավեր աշխատանքների, ինչպես նաեւ դասախոսությունների որակի բարձրացման, տեքստերի տպագրման նախապատրաստման եւ հրատարակման, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների, դիմորդների ընդունելության, ուսումնական պարապմունքների արդյունավետության բարձրացման խնդիրների մասին: Արձանագրություններից պարզ է դառնում, որ չնայած ֆակուլտետում անվանի դասախոսների անձնուրաց ջանքերին, ինչպես նաեւ ուսանողության մեծ խանդավառությանն ու ջանասիրությանը, այնուամենայնիվ, առաջին կիսամյակի արդյունքները չեն գոհացրել տնօրինության սպասելիքները՝ ֆակուլտետի դասախոսներին ու դեկավարությանը բերելով այն եզրահանգման, որ համալսարանը՝ որպես ուսումնագիտական հաստատություն, պետք է իր գործունեությունը ծավալի ոչ թե Ալեքսանդրապոլում, այլ մայրաքաղաքում:

Շարունակությունը՝ էջ 8

ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԳՅՈՒՄԻՆ

Գյումրիից Կարս 40–45 կմ է, ժամանակին գրեթե ընդհանուր էին բարբառն ու կենցաղը: Կարսի անկումից հետո Չարենցը Գյումրիով էր կարոտն առնում հայրենի հող ու ջրից, խոսք ու զրույցից: Այդ իսկ պատճառով հաճախակի էր լինում Գյումրիում: Սկստիչ Արմենի վկայությամբ՝ շատ լավ տիրապետում էր ոչ միայն բարբառին, այլև գյումրվա խոսվածքին:

Գյումրիի ներկայությունը Չարենցի կյանքում առաջին հերթին սիրային հուզիչ մի պատմություն է՝ կապված Գյումրիի գեղեցկուհիներից մեկի՝ Արմենուհի Տիգրանյանի (1888–1962) հետ: Վերջինս 1914-ին Մենուհի գրական անունով հրատարակել էր տեղյանական թախիծով պարուրված բանաստեղծությունների ժողովածու: Չարենցի հետ նրա հանդիպումը կայացել է 1920-ին՝ Նիկոլ Աղբալյանի ղեկավարած մախարարությունում: Չարենցին նվիրված Աղբալյանի հայտնի գեղուցումից հետո Կարսից երեւան շտապող Չարենցին 1920 թ. հունվարի 25-ին դիմավորում է նույն մախարարությունում պաշտոնավարող Արմենուհին: Սերը միանգամից էր ու փոխադարձ, ինչի ծնունդ է 1920 թ. փետրվարին Չարենցի գրած «Էմալե պրոֆիլը Ձեր. Գալանտ երգեր» բարձրաշխարհիկ շարքը, որը բացվում է «Սոնետի» այս տողերով (ԵԺ, I, 177).

Ես ինչպէս Ձեզ չսիրեմ:- Դուք արվեստ եք ու հոգի: Օ, կարելի՛ է արդյոք պրոֆիլը Ձեր չսիրել: Ով երզ ունի իր սրտում ու սովոր է գեղեցկի՝ Նա պարտավոր է Ձեզ բոլոր, հազար տոնտ նվիրել:

Ամփոփական շարունակությունը ֆրանսիական պառնասականներից եկող ոգեշունչ տարերքն է (ԵԺ, I, 178).

Էմալե պրոֆիլը Ձեր, Ձեր հակինթ անջերը բիլ ես այսօր կուզեմ երգել, Որպես մի անհայտ դը Լիլ:

Արմենուհին Արմեն Տիգրանյանի քույրն էր, ամուսնացած էր գրող եւ ազգային գործիչ Ավետիս Ահարոնյանի որդու՝ Վարդգես Ահարոնյանի հետ, որը 1918–1920 թթ. Առաջին Համաշխարհային պատերազմից հետո Գալանտ երգեր» բարձրաշխարհիկ շարքից: Չարենցը 5 բանաստեղծություն ուղարկում է «Գեղար-

վեստին»: Հետո փոշմանում է, մամակ է գրում Գարեգին Լեւոնյանին եւ խնդրում չտպագրել: Բայց արդեն ուշ էր, բանաստեղծությունները լույս են տեսնում հանդեսի 1921 թ. 7-րդ համարում: Մինչ այդ էլ խանդը Վարդգեսի եւ Չարենցի միջև վերածվել էր սուր լարվածության, որը վերջ է գտնում խորհրդայնացումից անմիջապես հետո, նախ՝ Վարդգեսի, այնուհետեւ՝ Արմենուհու վտարանդիությամբ: Բեռլին, Փարիզ, 1923-ից՝ ԱՄՆ: Շատ արագ վրա է հասնում նրանց ամուսնալուծությունը, 1931-ին մահանում է միակ աղջիկը, եւ Արմենուհին՝ միայնակ, տխուր, կարոտախտից հիվանդ ու հուսահատ, հայրենիքի ու Չարենցի հիշատակները սրտում, կյանքն ավարտում է Նյու Յորքում: Պահպանվել են նրա շատ թանկ տպագիր հուշերը Չարենցի հետ կապի մասին, ինչպես նաեւ առանձին բանաստեղծություններ: Այս պատմությունը խորունկ շերտեր ունի եւ արժանի է մանրամասնվելու:

Անվերադարձ հրաժեշտի այս մույն թվին՝ 1922-ին, Չարենցը ձեռնարկեց «Երեքի»՝ ամեն ինչ տակնուվրա անող դեկլարացիան, եւ մայրաքաղաք Երեւանը մի քանի օրվա մեջ դարձավ գրական-մշակութային կյանքի մայրաքաղաք: Պոլիսն այլեւս հայ մտավոր կյանքի կենտրոն չէր անգամ մանցորդաց սերնդի համար, իսկ Թիֆլիսի գրական-մշակութային ուժերը կամաց-կամաց տեղափոխվում էին Երեւան:

Գրական այս շարժման երեւանյան թափն առաջինը հասավ Գյումրի, որն այդ ժամանակ նաեւ որբանոցային բանաստեղծների քաղաք էր: Մոտակա անցյալի դառը հիշողություններով ապրող թմրած գրական Գյումրին արթնացրեց Չարենցը. 1922 թ. հուլիս 20-ին եւ օգոստոսի 10–13-ին նրա գլխավորած «Երեքի» խումբն արդեն Գյումրիում էր՝ «Երեքի» դեկլարացիայի կոչերով անցկացնելով աղմկալի հանդիպումներ՝ շեփո-րահանդեսներ, դասախոսություններ եւ բանաստեղծությունների ասմունք:

Այս ընթացքում երեւանից հետո Գյումրին աստիճանաբար դառնում է մշակութային կյանքի կենտրոն, որտեղ եւ ձեւավորվում են նոր գրական ուժերը՝ այդ տարիներին Գյումրիում ապրող Գուրգեն Մահարի, գյումրեցի Սկրտիչ Արմեն, Թեհրանցի Գյումրիում վերաբնակված Գեղամ Սարյան, 1915-ից Գյումրի գաղթած Սողոմոն Տարոնցի, Գյումրիի որբանոցներից կյանք մտած Սարմեն, դեռեւս որբանոցներից մեկում հանգր-

վանած խաչիկ Դաշտենց եւ ուրիշներ:

1922-ին «Երեքի» դեկլարացիայի տեսական ուղեցույցներով լույս տեսած «Պոեզոգուռնա» գրքում Չարենցը գետն-դել է «Գյումրի» բանաստեղծությունը՝ «Սիրելի Արտաշես Տեր-Մարտիրոսյանին, գյումրեցի պոետին» ձոնով: Սկսվում է այս տողերով՝ «Դեռ երգում է այստեղ գուռնան, // Դեռ դիմը սիրտ է հուզում...»: Հիշվում է այդ տարիներին քաղաքում հայտնի գուռնաչի Վադոն: «Նորից Արտաշես Տեր-Մարտիրոսյանին, գյումրեցի պոետին» ձոնով նրան է նվիրված նաեւ «Շոգեգալուստ» բանաստեղծությունը՝ որպես մուք անցյալից արթնամալու պահանջ (ԵԺ, III, 30–33).

Հասկանում եք՝ հողմակոծ ու ժխոր Օրերի գծերով երկաթե Գնացքի մեմա մի դղորդ Մոտենում է Գալիքը թեծ:

Իսկ դու, պոետ Աշնուտի, Քո գուլիսը ինչու ես կքել Ու թողել ես, որ մուծը մթին Աշուշե թե սիրտդ, թե քեզ:

Չարենցը բարձր էր գնահատում գյումրեցի պոետ Արտաշես Տեր-Մարտիրոսյանին, եւ այդ բանաստեղծական ձոները պատահական չեն:

Ո՛վ էր Արտաշես Տեր-Մարտիրոսյանը. 1912-ին Գյումրիում լույս ընծայած «Աշնուտ (Տխրության հյուսկեն)» բանաստեղծական ժողովածուի հեղինակը, գրական գործիչ, որին Չարենցը դեռեւս պիտի հանդիպեր:

Ուստի՝ առաջ ընկնելով ասեմը՝ 1935-ին Մոսկվայի «Художественная литература» հրատարակչությունը նախապատրաստական աշխատանք էր տալիս Չարենցի երկերը ռուսերեն




թարգմանելու եւ հրատարակելու ուղղությամբ: Կազմակերպիչը հրատարակչության խմբագրության վարիչներից ահա այս գյումրեցի պոետ Արտաշես Տեր-Մարտիրոսյանն էր, որին Չարենցը, ինչպես նշեցինք, ոչ միայն բանաստեղծություններ էր ձոնել, այլեւ «922. 30. X» թվագրությամբ Մոսկվայում նրան էր նվիրել իր «Երկերի ժողովածուի» 1922 թ. հրատարակության II հատորը եւ «Պոեզոգուռնա» գիրքը: Տեր-Մարտիրոսյանը ծնված 1892-ին Ալեքսպոլում, որպես «ժողովրդի թշնամի»՝ գնդակահարվել է 1937-ին:

«Երեքի» շրջայներից հետո քաղաքը թափ տվեց իրեն, բանաստեղծները հավաքվեցին «Բանվոր» թերթի շուրջը, որի խմբագիր Աշոտ Հախումյանը գրական դեմք էր եւ հողվածներով հանդես էր գալիս Ա. Նորել ծածկանունով: Աշոտ Հախումյանը երերում դեմք էր գրական կյանքում, որին Չարենցն այսպես նախշեց «Ա. Հախ.» (1929) էպիգրամում («Նորահայտ էջեր», 1996, էջ 149).

Նա հաշում է աջ ու ձախ, Քամին որ կողմ որ տանի, Եթե աջը չընդունեց – Ձախին էլ է պիտանի...

Շարունակությունը՝ էջ 8

ԵՐՎԱՆԻ ՕՏՅԱՆ. ՀԺՎԱՏԱԳՈՂ ՄԱՐԴՐԸ Ծննդյան 150-ամյակի առթիվ



Սկիզբը՝ թիվ 19–22

Ճահարկությունների ու խաչագողությունների վերահամանն է հետաճող Օտյանը «Կանաչ հովանոցով կինը կամ մոր խաչագողություն» վեպը: Հեղինակն իր վեպն անվանել է պատմական՝ նկատի ունենալով ներկայացվող դեպքերի հավաստիությունը: Վեպում գործող հերոսները՝ զինված խաբեության եւ անազնվության տարաբնույթ գեներով, հետամուտ են մեկ նպատակի՝ դրամ վաստակել, եւ միջոցների միջեւ խտրականություն չեն դնում: Նրանք խաբում են ոչ միայն ուրիշներին, այլև միմյանց: Չավեշտն այն է, որ ինչպես խաբող, այնպես էլ խաբվող մարդկանց մեջ տարբերություն չկա. երկու կողմն էլ անհաղորդ են ազգային ցավերին, խնդիրներին ու վիճակին, զուրկ բարձր գաղափարներից՝ դրանով իսկ դառնալով մերժելի մարդիկ: Օտյանն այս առումով երեսուն է համում նաեւ մոր տիպեր՝ կեղծ կամավորներ, որոնք հայրենասիրության քողի ներքո անում են ամեն բան... «*փող փրկելու*» համար եւ որի համար «*ամեն բան աչք առած են*»:

Վեպի գլխավոր հերոսը՝ Լյուսին, որին Օտյանը

ըն Կանաչ հովանոցով կին որակումն է տալիս, դրամ է վաստակում սիրարկածների շղթա հյուսելով՝ իր ցանցի մեջ գցելով «*փորձված*» ու «*անփորձ*» բազում մարդկանց: Վեպի ուշադրված տիպերից է «*գործի*» մեջ խղճմտանք չունեցող, պատահական թերթերի աշխատակից Փանոսը, որն այն համոզումն ունի, թե Աստված մարդկանց ստեղծել է, որ ինքը նրանցից օգուտներ քաղի:

«Վերջին լուր» թերթի 1921 թ. հոկտեմբերի 22-ի համարով այս վեպն ավարտվում է:

Հաջորդ իսկ համարով Օտյանը հանդես է գալիս մոր վեպով՝ «Կավե հերոսներ կամ մոր ազգայինճինը», որն ընդհիշումներով շարունակվում է մինչեւ 1923 թ. փետրվարի 6-ի համարը: Թեեւ վերադրվեստական պատումի առումով այս վեպն ավելի նշանակալից է, սակայն օրը օրին գրելու ոչ այն է սովորույթը, ոչ այն է պարտադրանքը (թերթերն անընդհատ մյուս էին պահանջում) Օտյանի ինչպես այս, այնպես էլ մյուս վեպերը խիստ ծավալուն են դարձրել՝ լեցուն երբեմն ավելորդաբանություններով, բուն գործողությունների հետ քիչ կապ ունեցող պատմություններով եւ անգամ կրկնություններով: Միայն այս վեպում էլ ժյուլի, հորշակի, Շատիստունու եւ այլոց նկարագրերը թեեւ հագեցված են տարաբնույթ գործունեություններով, սակայն որպես մարդ՝ նրանք քիչ են տարբերվում Օտյանի այս կամ այն գործում արդեն պատկերված տիպերից:

Այդպիսին է նաեւ այս վեպում գործող Ավետիս Էֆենդին՝ նույն գծով հարուստը, նույն անդեն «ազգայինճին», ինչպես նրանց սիրում էր անվանել Օտյանը: Երբ այդ «*կավե հերոսին*» առաջարկում են քաղաքային ժողովի անդամ դառնալուց

առաջ դրամական մի քանի ազգանպաստ զոհողություններ կատարել, նա ամենայն ամբարտաճանությամբ պատասխանում է. «*Ազգն է, որ ինձի պետք ունի եւ ոչ թե ես ազգի*» («Վերջին լուր», Կ. Պոլիս, 1921, թիվ 2335):

Օտյանը, հանձնի Ավետիսի, երեսուն է հանում «*դասական*» հարուստի վարքագծում ի հայտ եկած նաեւ մի նոր դիրքորոշում՝ պատեհապաշտությունը: Նա օգտվել է պատերազմի ընթեռած բոլոր «*առավելություններից*» եւ էլ ավելի է հարստացել ու հիմա էլ օգտվում է գինադադարի առթած հնարավորություններից՝ նոր խարդախություններ կատարում՝ ամեն ինչ բողարկելով ազգային նվիրյալի անվան տակ:

Ըստ հանգամանքների եւ ըստ շահի վերափոխվող մարդիկ քիչ չեղան պատերազմի տարիներին: Օտյանը իր մի շարք գործերում կերտել է ման հերոսների: Կային մարդիկ, որոնք անգամ կրոնն ու ազգությունն էին փոխում: «*Ըստ հարկի*» հավատափոխ դարձած մի պոլսեցու մասին Օտյանը պատմում է, որ մինչ պատերազմը իբրանոսյան եղած այդ մարդը իրեն հռչակում է աղա իբրանոս եւ թրքություն ընդունում, իսկ գինադադարից հետո մորից իրեն հայ «*դարձնում*»:

Օտյանը ծաղրում է նաեւ այն հայ թերթերը, որոնք ուռճացված էին ներկայացնում ամեն բան: Հնարավոր լուրերը շատ էին մանավանդ ազգային խնդիրների վերաբերող նյութերում: Օտյանը գրում է, որ երբ բանավոր լուրերի համաձայն՝ Չավեն պատրիարքը (*Չավեն (Տեր-Եղիայան) պատրիարքը Տիգրանակերտի (Դիարբեքի) թեմի առաջնորդն էր, որ 1913-ին ընտրվեց Պոլսի պատրիարք: 1916-ին նա արտրվել էր Բաղդադ, որտեղից վերադարձավ 1918-ին*) աքսորավայրից Կ. Պոլիս պիտի վերադառնար, հայ թերթերը հազար ու մի ստապատիր պատմություններ էին հորինում: Թերթերից մեկը կանգնում է դժվարության առջեւ. ինչպե՞ս ներկայացնել պատրիարքի առողջությունը: Տկար ցույց տալու դեպքում ընթերցողը կհուսալքվեր, առողջ ցույց տալու դեպքում կմտածեր, թե աքսորավայրում նա տառապանք չի քաշել: Եվ ահա գտնվում է «*եղբ*».

Չավեն սրբազանի վերաբերյալ թերթը գրում է,

որ աքսորի տառապանքների մեջ տկարացած եւ հիվանդացած պատրիարքն անգլիացի զինվորական թիշկների խնամքի շնորհիվ վերստին գտել է իր առողջությունը եւ կատարելապես ապաքինված հալեալ է հասել:

Վեպի ուժեղ հատվածներից է մի քանի դատարկապորտների բուն էությունը պարզող այն հատվածը, որը վերաբերում է նրանց երթին դեպի եկեղեցի՝ նպատակ ունենալով գրավել բանկալն ու թաղի ատենապետ դարձնել իրենցից մեկին՝ ժյուլին: Ինքնակոչ այդ մարդիկ, ամբողջ ճեղքելով, գոչում են. «*Ճամբա բացեք, Ճամբա բացեք, ժողովրդին Ճամբա բացեք*» (նույն տեղում, թիվ 2381):

Տեր Բարսեղի տիպը («Միջնորդ Տեր-Պապան») Օտյանի կերտած հաջողված կերպարներից է, խտացումը «*մարդ դառնալու*» արվեստի մի շարք երեսույթների, որտեղ գլխավոր դերակատարը դրամն է:

Միայն այսպես անխնա ծաղրի ենթարկելով մեծատունների ու «*գործի*» մարդկանց ամբողջ խավերի՝ Օտյանն այնուամենայնիվ մնում է ազգային համերաշխության ջատագով, քանի որ թուրքական յաթաղանը տարբերություն չէր դնում հայ հարուստի եւ աղքատի, մեղավորի եւ անմեղի, կուսակցականի եւ անկուսակցականի միջեւ:

1922 թ. սեպտեմբերից սկսած՝ արեւմտահայությունն ստիպված էր մորից բռնել գաղթի ճամփաները: Նախքան քեմալականների՝ Կ. Պոլիս մտնելը (նոյեմբերին) քաղաքից հեռանում է նաեւ Օտյանը: Նա անցնում է Բուխարեստ, որտեղ, ի շարք այլոց, նաեւ գաղթել էին Հովհ. Թուսմանյանի նախաձեռնությամբ 1921 թ. Կ. Պոլսում հիմնված «Հայ արվեստի տան» մի խումբ նախկին անդամներ, որոնք Օտյանի մտերիմներն էին նաեւ: Օտյանը կարճ ժամանակով աշխատակցում է այստեղ լույս տեսնող «Նոր արշալույս» թերթին, Հ. Բ. Սիրունու «Նավասարդին», ապա անցնում է Տրիպոլիս, Բեյրութ եւ վերջնականապես հիմնավորվում Կահիրեում, որտեղ աշխատակցում է Վահան Թեքեյանի խմբագրությամբ լույս տեսնող «Արեւ» թերթին:

Շարունակությունը՝ էջ 8

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Սկիզբը՝ էջ 6

Ո՛վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասիրութուն, դու պատրաստե, վառե, սրբե զսիրտ Յայկակա: Քեզմով վառված սիրտն՝ անխայթ եւ անմուխ լույս կ'արծակվե, եւ եթե խարկի մրկի սիրտն, եւ անցնի երկնավոր մասամբն, երկնունակ մասն՝ մնա ի վերա հայրենյաց, որպես հոտ մըշկի եւ կնդրկի»:

Յայոց պատմության մասին Ղ. Ալիշանի գրվածքները մի կարետոր առանձնահատկությամբ էականորեն տարբեր են մյուս հայագետների չորուցամաք գործերից: Իր երկերում նա դրել է մեծ սիրտ ու հոգի, գրել է սիրով ու նվիրումով, տպավորելու, ներգործելու ազնիվ նպատակադրմամբ:

Ալիշան երեւոյթի այս կարետոր յուրահատկությունները նկատել ու գնահատել են գրական մարդիկ, գրեթե բոլոր հայ նշանավոր մտավորականները: Ավ. Իսահակյանը, օրինակ, Ալիշանի մասին իր հուշերում գրել է. «Յայաստանը ոչ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա՝ այդ մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել, եւ երազը՝ իրականություն»: Ղ. Ալիշանն իր հայագիտական գործերով ոչ միայն գիտությանն է ծառայել, այլեւ նպաստել է հայ գեղարվեստական մտքի ու գրականության զարգացմանը: Գրական ազգակցության ու ժառանգորդության իմաստով նա Բաֆֆու անմիջական նախորդն է նաեւ Ա. Չոպանյանի համոզմամբ: Ղ. Ալիշանի ստեղծագործությունը, ըստ նրա, «սթափեցնող, ազնվացնող ձայնն եղած է, որ նախապատրաստած եւ ոյուրացուցած է Բաֆֆի գործը»:


Դիպուկ է նաեւ «Գիրք ճանապարհի» ժողովածուի 1933 թ. «Մահվան տեսիլ» պոեմում չարենյան բնութագիրը, որի մեջ Ղ. Ալիշանը Դանտեի եւ սերունդների առջեւ ինքն իրեն ներկայացնում է որպես հանուն ներկայի եւ ապագայի անցյալի փառքեր երգած, իր հզոր «տավիղը շեփոր դարձրած» մի այլ «ռազմի երգերի գուսան», որի երգը, սակայն, չի հնչել ապարդյուն: Այդ կենսահաստատ հզոր երգը՝ որպես գաղափարի, վրեժի ու ցամառ եզակի բարձրարվեստ մարմնացում, որպես հեռավոր Ադրիատիկի ափերից «արծվի թելերով» հասնելով մայր երկիր՝ Յայաստան՝ «հայրենյաց համար կռվողների», անմահ քաջերի սերունդներ ուղի հանող ու խրախուսող անպարտելի ոգի: Այս է հաստատում Չարենցի կերպավորած Ալիշանը՝ դիմելով Դանտեին.

Եվ երգս իզուր չհնչեց:– Յայրենի եզերքից քո լուրթ թռչելով, իբրեւ հրավեր, դեպի հայրենիքն իմ հեռու – Նա ուղի հանեց քաջարի այրերի անմահ մի սերունդ, Որ ելավ գերության փոշուց հայրենյաց համար կռվելու:–

Եվ թեւ քենով բարբարոս փորձեցին նոքա, դարավոր Ոսկյաներն Յայոց աշխարհի, մեզ այրամբ ողորդել կրկին, – Բայց վսեմ մեր երթը եղավ անցյալի փայլով փառավոր,

Եվ խաղաղ սրտով ես մեռա՝ միմեւ մահ քնարը ձեռքիս:

Դժվար է գերապատվություն տալ գիտնական կամ բանաստեղծ Ղ. Ալիշանին, որովհետեւ նա



երկուսն էլ է միաժամանակ: Յայագիտության այդ գերիզուր հսկան, բանաստեղծ ու գիտնական լինելով, կոթողային հիմնարար աշխատություններով ու սքանչելի «Նահապետի երգերով» առաջ է մղել հայ գեղարվեստական բանասիրական ու պատմագիտական միտքը: Նրանով է սկզբնավորվել արեւմտահայ բանաստեղծական լեզվի մի մակարդակը՝ ալիշանյան աշխարհաբարը (Ալիշանյան աշխարհաբար ասելով՝ պետք է հասկանալ Ղ. Ալիշանի գործածած աշխարհաբարը. որի մեջ զգալի է գրաբարի շունչը՝ բարբառային բառերի ու ժողովրդախոսակցական ոճերի բառախառնությամբ: Հիմնականում գրաբարագիր այս հեղինակը կատարելապես էր տիրապետում ոչ միայն գրաբարին ու միջին հայերենին, այլեւ հայերենի տասնյակ բարբառներին ու խոսվածքներին: Նրա գործածած աշխարհաբարը ոչ միայն հայերենի դրսեւորման այս երկու որակների՝ գրաբարի եւ միջին հայերենի, այլեւ բարբառային բառերի, դարձվածների ու ոճական ձեւերի մի յուրօրինակ խառնուրդ է, որ Ալիշանից հետո որեւէ հայ գրող չի գործածել նույն համադրությամբ: Այդ պատճառով էլ աշխարհաբարի անկրկնելի այդ տեսակը՝ ի պատիվ մեծ բանաստեղծի ու հայագետի, կոչվել է ալիշանյան աշխարհաբար – Ս. Մ.): Իսկ նրա գիտական ու գեղարվեստական բազմահարուստ աշխարհը եղել եւ մնում է մեր ժողովրդի հոգեմտավոր զարթոնքն ու նրա զարգացումն ապահովող կարետոր կենսական հիմքերից ու ամենագորեղ խթաններից մեկը:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՅ...

Սկիզբը՝ էջ 6

1920 թ. մայիսի 27-ին այդ հարցով պաշտոնապես համըային կրթության նախարարին է դիմել ֆակուլտետի ղեկան Մետրոպ եպիսկոպոսը՝ ասելով. «Առաջին սեմեստրի փորձը համոզեց բոլոր դասախոսներին, որ անհրաժեշտ է համալսարան ունենալ մայրաքաղաքում: Ֆակուլտետի հանձնարարությամբ Ձատկի տոներին եկա Երեւան: Դիմեցի համըային կրթության նախարար Ն. Աղբալյանին, եւ նա խոստացավ հմարավոր քայլեր կատարել այդ ուղղությամբ: Նույն խնդրանքով, պարոն նախարար, նորից դիմում եմ Ձեզ, որ միջոցներ ձեռք առնեք առաջիկա ամիսներին: Սեպտեմբեր ամսին համալսարանը տեղափոխվի Երեւան, որ նա ունենա հատուկ շենք, եւ որ այդ որոշումը տեղի ունենա ըստ կարելիվոյն շուտ, որպեսզի կարելի լինի հոգալ բնակարանների, նաեւ դասախոսների համար» (ՅԱՄ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 117):

Համաձիտ լինելով վերոնշյալ հարցադրմանը՝ նորանշանակ նախարար Գ. Ղազարյանն առաջարկ է արել Նախարարների խորհրդին՝ համալսարանը Երեւան տեղափոխելու վերաբերյալ

(տե՛ս ՅԱՄ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 115): Այդ առաջարկի հիման վրա էլ 1920 թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշեց.

1. համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երեւան,
2. ուսուցչական սեմինարիայի շենքը (այժմ ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի շենքը – Է. Մ.) հատկացնել համալսարանին,
3. պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր (տե՛ս ՅԱՄ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 117 եւ ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 128):

Ուսուցչական սեմինարիայի շենքի վերանորոգման համար նախարարությունը հատկացրեց 500 000 ռուբլի: Համաձայն նշված որոշման՝ Երեւանում համալսարանն իր պարապմունքները պետք է վերսկսեր 1920 թ. հոկտեմբերի 16-ից, սակայն քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումն իրագործել:

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐՎԱՆԻ ՕՏՅԱՆ. չժպտացող մարդը

Սկիզբը՝ էջ 7

Կյանքի, աշխարհի ու մարդկանց վրա «անհոգ հայացքով» նայող այս մարդու հոգին արդեն շատ էր դառնացած: Սիրիայի եւ Միջագետքի անապատները անդառնալի ավերել էին նրա առողջությունը: Պատասխանելով «Շամբ» հանդեսի հարցաթերթիկին, թե ինչպես պիտի ուզեիր մեռնել՝ Օտյանը դեռեւս տարիներ առաջ գրել էր. «*Առանց կարօտի եւ առանց դառնութեան*» («Շամբ», Կ. Պոլիս, 1913, թիվ 48, հոկտեմբեր 12–25, էջ 363): Ո՛չ մեկն իրականացավ եւ ո՛չ էլ մյուսը: 1926 թ. հոկտեմբերի 3-ին օտարության մեջ՝ Կահիրեի իտալական հիվանդանոցում, մեծ երգիծաբանն ընդմիշտ փակեց իր աչքերը: Նրա աշյունը գնաց հանգչելու Ալեքսանդրիայի Մար Սինայի գերեզմանոցում՝ մի այլ հայ դժբախտի՝ Արփի. Արփիարյանի աշյունի կողքին: «...գերեզմանատան այդ անկյունը,– գրում է Վ. Թեքեյանը «Դամբանական Վահան Թեքեանի» իր խոսքում,– առաջին «Յայրենիք» խմբագրատան մէկ սենեակին (այնտեղ էր թաղված նաեւ Կունծիկ արեղան, որը նույնպես «Յայրենիքի» աշխատակից էր եղել) կը նմանի հիմա...» (Թեղիկ, «Ամենուն տարեցոյցը», Փարիզ, 1928, էջ 438):

Իր ժողովրդին հասած անլուր տառապանքները, հետադիմության, ապագայնացման ու շահամոլության դեմ մղած ամենօրյա պայքարը, աքսորն ու տառապանքը մաշեցին Օտյանի ֆիզիկականը, բայց նրա ըմբոստ հոգին միշտ մնաց անեղծ ու բարձր: Եվ երիցս ճիշտ էր Ալ. Շիրվանզադեն, երբ նրա մասին գրեց. «*Երվանդ Օտյանն ինքն էլ արտիստ էր՝ բառիս ոչ սահմանափակ իմաստով: Արտիստ էր որպես գրող, որպես մտածող ու գործող, արտիստ էր ճաշակով, իր մրբազգացությամբ, իր կրթությամբ... Երվանդ Օտյանը մարդ էր*» (Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից. Գուշեր, Եր., 1982, էջ 510):

Այդ մեծատառով մարդն այսօր էլ մեզ հետ

ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԳՅՈՒՄԻՆԸ

Սկիզբը՝ էջ 7

1923 թ. դեկտեմբերի 14-ին «Բանվորը» (թիվ 89) հայտնում է, որ խմբագրությանը կից կազմավորվել է «Ստեղծիք» երիտասարդական գրական խմբակը: Իսկ արդեն 1925-ին Մահարին ու Արմենը Գյումրիում կազմակերպում են «Յոկտեմբեր» գրական խմբակցությունը:

Չարենցը 1923-ին տիկնոջ՝ Արփենիկի հետ մեկ շաբաթով լինում է Գյումրիում, մասնակցում է լուսբաժնի կազմակերպած գրական երեկոյին, հանդես գալիս զեկուցմամբ՝ խոսելով գրական հոսանքների եւ նոր ժանրագոյացումների մասին, քննադատում կեղծ պրոլետարականության կարմիր դրոշով քողարկվող ապաշնորհ գրողներին: Երեկոյի գեղարվեստական բաժնում հնչում են Չարենցի բանաստեղծությունները:

1924-ի ամռանը Չարենցը Արփենիկի հետ մորից է այցելում Գյումրի եւ միջնակարգ դպրոցի վերածված հին գիմնազիայում հանդես գալիս դասախոսությամբ: Սկսնակներից մեկի գրական փորձի կապակցությամբ ասել է. «Յուդալի է, բայց ոչ հյուբալի» եւ հետո բացատրել. «Ձեր գրածը չափած է, նշանակում է յուդալի է, իսկ խոսքերը արձակ խոսքեր են, դրա համար էլ հյուբը պակաս է» («Չարենցի հետ: Գուշեր», 1997, էջ 137–138):

1925-ի գարնանը Շիրակի ջրանցքի բացումը դառնում է նոր մերշնչանքի աղբյուր, կառույցին պոեմներ ու բանաստեղծություններ են նվիրում Գ. Հակոբյանը եւ ուրիշներ, բայց առաջինը գյումրեցի բանաստեղծներն էին. Մահարի՝ «Շիրակի ջրանցքը», Արմեն՝ «Շիրակնալ», Գ. Սարյան՝ «Շիրակի հարսանիքը», Սարմեն՝ «Դաշտերը ժպտում են»: Քաղաքում ստեղծում են այդ հարվածային կառույցին նվիրված գրական անկյուն եւ հենց Գյումրիում էլ 1925-ին տպագրում իրենց նշված գրքերը: Դրանք երկրի գեղարվեստական պատկերն ստեղծելու առաջին փորձերն էին, ինչին դեռեւս 1922 թվականից մղում էր Հանրապետության

է եւ շարունակում է իր կյանքով ու տասնյակ հազարավոր էջեր կազմող իր գրականությանը ուղենիշ մնալ այն ամենի, ինչն ազդել է ու արդար: Նա հայ ժողովրդի ճակատագրական մի երկար շրջանում ծաղրեց ու քննադատեց ինչպես օտարների, այնպես էլ յուրայինների սխալներն ու թերությունները, անարգանքի սյունին զամեց այն ամենը, ինչը խանգարում էր ժողովրդի միասնությանն ու առաջընթացին. արյան ու կորուստների այդ տարիներին նաեւ կենսաբեր ծիծաղ առթեց մահվան ճիրաններում հայտնված իր ժողովրդին: Նրա գրականությունը եղավ այն միակը, որն այսօր դրված է Հակոբ Պարոնյանի ստեղծածի կողքին՝ թեմատիկ ու ժամանակաշրջանային ավելի լայն ընդգրկումներով. պատկերած տիպերի եւ արծարծած խնդիրների ավելի բազմազանությամբ, իհարկե ոչ միշտ այն գեղարվեստական մշակվածությամբ, հակիրճությամբ ու գործողությունների զարգացման սրընթացությամբ, որպիսիք են պարոնյանական ստեղծագործությունները: Մեր գրականության մեջ այդ փոխհարաբերությունն արդեն վաղուց է ճշտված. «... որպես երգիծաբան Երվանդ Օտյանը ավելի ինքնատիպ էր, քան Հակոբ Պարոնյանը, թեւ ոչ սրա չափ սրամիտ եւ հնարագետ» (նույն տեղում, էջ 494):

Լինելով ու մնալով հայ երգիծաբանության մեծագույն դասականներից մեկը՝ Օտյանը քչախոս էր եւ երբեք չէր ծիծաղում: Թերեւս միայն մեկ անգամ՝ իր մահվան նախադրանք, ինչպես վկայում է Վ. Թեքեյանը. «*ժպտեցավ քանի մը անգամներ՝ իր հատած, բարակ շրթունքներուն անհունօրէն նուրբ ու անուշ ժպիտովը*»: Այդ ժպիտ էր «բախտին դէմ, ցաւին դէմ, մահվան դէմ» («Արեւ», Կահիրե, 1926, 5 հոկտեմբերի): ժպիտ, որ կյանքի նկատմամբ ունեցած հեզմանքն էր:

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը: Գ. Սարյանը վկայում է. «Յենց այս շրջանում էր, որ Գ. Մահարու եւ Մ. Արմենի Նախաձեռնությամբ հիմնվեց բանվորագյուղացիական գրողների «Յոկտեմբեր» միությունը, որի մեջ էին, նախաձեռնողներից բացի, Ս. Տարոնցին, Սարմենը, տողերիս գրողը եւ մի քանի ուրիշ ընկերներ: Յենց առաջին ժողովին «Յոկտեմբեր» միության պատվավոր նախագահ ընտրեցինք Եղիշե Չարենցին, որն այդ ժամանակ գտնվում էր արտասահմանում» («Յիշողություններ Եղիշե Չարենցի մասին», 1961, էջ 150):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Դիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Դրատարակիչ՝
«Քրիստոնյա Յայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 13.12.2019 թ.

Տպաքանակը՝ 1175